ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1132-Ա/2 «01» սեպտեմբերի, 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 621-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հուլիսի 16-ի N 905-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի օգոստոսի 31-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 15-ի N 621-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական նախագծերի ֆինանսավորումը սկսել 2020 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«01» սեպտեմբերի, 2020 թ.
N 1132-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-ի N 621-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Հ/Հ	Վերնագիր	Ղեկավար	Կազմակերպություն
1	Կլիմայի փոփոխության ազդեցությունը խաղողի վազի աճի և բերքի որակի վրա. խաղողի օրգանական բարձրադիր այգիների հիմնումը՝ որպես այլընտրանք Հայաստանում	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	Bacillus thuringiensis շտամերի հիման վրա միջատասպան պատրաստուկների և բույսերի աճի խթանիչի ստացումն ու կիրառումը	Ավետիսյան Սոնա Ոսկանի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
3	Մագնիսա-դիէլեկտրիկ նյութերի և կենտրոնացված պարամետրերով ռեզոնատորների հիման վրա էլեկտրականապես փոքր անտենաների նախագծում և մշակում	Հարոյան Հովհաննես Սամվելի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
4	Արտարմատային սնուցման (տերևային սնուցում) նպատակով կիրառելու համալիր պարարտանյութերի սինթեզի տեխնոլոգիա, սինթեզում և փորձարկում	Գասպարյան Արսեն Հակոբի	ՀԱԱՀ «Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ
5	«Սիս» կենսահումուսի տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը ՀՀ բնահողային գոտիներում	Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի	ՀԱԱՀ «Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ
6	Լայն ապերտուրայով երկկողմանի գազի հոսքի չափիչ սարք՝ տատանվող լարերի հիման վրա	Հարությունյան Սուրեն Գուրգենի	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ